

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ս. ՊԵՏԵՐՈՒԲԻԿԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ՀԱՅԵՐԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆ

Հանրաժամութ իրողութիւն է ուսանողներին մեծ մասի թշուառ դրութիւնը: Հայ ուսանողութիւնը, ի հարկէ, բացառութիւն չէ կազմում: Նա գուցէ դեռ աւելի թշուառ վիճակի է նկատուած լինում իբրև պանդուխտ անազգական և անօգնական, խեղճութեամբ թափառելով փողոցից փողոց, տնից տուն, մինչև կը գտնուի մի արժանազին, անառողջ բնակարան և մի օտնի շնչին զատեր: Չեմ լիջում ով է ասել այս խօսքը մի ազգի զարգացման, ազնուութեան իբրև չափ կարող է համարուել մարդասիրական հաստատութիւնների թիւը, բայց եթէ այդ պարտը հայերին եւ այդ չափով չափէր, նա նրանց պէտք է կէս—բարբարոսների դասին հաշուէր: Այդ դասի մէջ եւ գնում եմ և մեր ինտելիգենցիան և ամենայն իրաւամբ: Եթէ ժողովուրդը դեռ մինչ այսօր է հասկացել հայ ուսանողներին օգնելու համար մի կասսա, բնակարան ստորել, կամ դրա օգուտը նրա համար շոշափելի չէ, որի մասին եւ նրան և չեմ մեղադրում, բայց հայ ինտելիգենցիան այսինքն այն մասը, որ եղել է առաջ ուսանող, նոյնպէս կրել է աշխատութեան ծանրութիւնը և ճաշակել է նրա բոլոր դաւնութիւնները, բացարձակապէս մեղաւոր է: Մեղաւոր է նրա համար, որ ուսանողական կեանքից յետոյ մտնելով գործնական կեանքի մէջ, ստանալով փափուկ պաշտօն և ապահով տեղ, նա մոռնում է իսկոյն, որ իր կրտսեր եղբայրները դեռ շարունակում են թշուառութեան մէջ ապրել: Հենց որ իր հասաւ այդ թշուառութիւնը զարգարում է, նա ուրորդին ուրանում է նրան ուրիշների համար: այդ բաւական չէ. քանի քանի անձինք մինչև անգամ մոռնում են իրենց բարոյական պարտքը, մոռնում են վերադարձնել այն շնչին զուժարը, որ նրանք ստացել են ուսանողական կասայից իրենց թշուառութեան օրերում: Եւ զիտեմ մի քանի այդպիսիներ, որոնք այսօր հարուստ և փափուկ ապրում են, բայց իրենց պարտքը վերադարձնել չեն կամենում և երբ ուսանողութիւնը դիմում է նրանց յիշեցնելով իրենց բարոյական պարտաւորութիւնը, նրանք դեռ վերադարձում են..... Այդ պարտները վերին ստիճանի ազգասիրութիւն են համարում, երբ ձրիարար մի դպրոցում մի քանի դասեր են տալիս, հոգարարութեան պաշտօն են կատարում և այն, բայց կազմել մի մշտական ընկերութիւն, որ նպատակ ուսանողներին,—ազգի այս ապագայ և միակ յայտն և հայրենիքի փառքին—աւարտելու իրենց ուսումը, նա չէ մոռնում անգամ, զուցէ դա բարձր ազգասիրութիւն չէ համարվում:—Հասկանալի է ուրեմն, որ ուսանողութիւնը, մնալով անօգնական և անպաշտպան, ստիպուած է ինքն իրեն օգնելու համար միջոցներ օտարել և միակ միջոցը, որ նա կարող է մոռնել մայրաքաղաքներում, դա թատրոնական ներկայացումներն է: Այստեղ զարմանալի անձնագործութիւն ենք տեսնում: Ուսանողութիւնը է իր պարտաւորները ամբողջ շարքով ներով: Նա պէտք է օրը հազար անգամ այստեղ այնտեղ փազէ թողաւորութիւն խնդրելու, տեղ փոխելու, հազուստ պատրաստելու, նա պէտք է ամեն տեսակ նուաստութեան ենթարկուի այս կամ այն հայ վաճառականին զիմելու և տոմսակ ծախելու համար երեսը սխալանելու, խնդրելու, մինչև որ սա կը բարեհաճէր բնութենելու և մի երկու բուրջի սպաս: Եստ անգամ նա անբարեխի խոչնդոտներ է հանդիպում. օրինակ, չէ ձարվում հայ օրիորդ կամ կին, որ համոզուէր բեմ դուրս գալ, ուստի և ստիպուած է լինում ակամայ այնպիսի պիտաններ ընտրել, որոնք շատ պատիւ չեն բերում նրա ճաշակին և չեն թողում հնազանդել շորագնդին—հասնողները անգամ ուսանողները Պետերբուրգում հայերէն ներկայացում կ'սկսեցան տալ, նրանք ստիպուած էին զիմել մի գերմանացուհու որն թէ և մի բառ հայերին չը գիտէր, բայց այնքան կամեցաւ յարգել հայ ուսանողութիւնը, որ բոլոր իր գերը ուսուցիչն բառերով գրելով անգիր սերտեց և մինչ անգամ շատ զեղեցիկ կերպով կատարեց: Երևի գերմանացուհու օրինակը ազգեց հայ օրիորդներին վրա, ըստ որում այնուհետև նրանք սկսեցին բեմ դուրս գալ և երբ այս սմոյս 23-ին եւ պատահամբ իմանալով թէ հայ ներկայացում կալ զիմեցի շքեղարուեստակն կրուրը, որտեղ պիտի լինէր ներկայացումը իմ հայ զգացումն ոչ պակաս շողջորթութեամբ էր տեսնելով բեմի վրա երեք հայ օրիորդ և մի հայ տիկին: Բարոյական պաշտաւորութիւն եմ համարում իմ և ուսանողութեան խորին շնորհակալութիւնը յայտնել հրապարակաբար Թ. Ասատուրեանին, օրիորդներ Եղիշխանեանին, Քամաճեանին, Մեղվինեանին, որոնք ունակու են անում հնաւնդ նախապաշարութեանը և չեն թողնում հայ երիտասարդ ուսանողին կարմրել օտարուհու առաջ: Այժմ գանք նոյն իսկ ներկայացման մասին մի քանի խօսք ասելու: Այս անգամ խաղում էին Սուսուկեանցի «Փաթարալա» կոմիկիան: Դեկորացիան հարուստ և շքեղ էր, սրահը լի էր և այդտեղ նարկայ էր ոչ թէ միայն մայրաքաղաքի հայ զաղթականութիւնը, այլ և վրացիք և ուսանողը: Զամբալովի դերը պ. Քեկարեան հիանալի կերպով կատարեց. նա բոլորովին բերան էր դերի նշանակութիւնը: Մասնատանի դերը (պ. Զարգարեան) թէ և ունէր մի քանի պակասութիւններ, բայց այդ թերութիւնները վերաբերում են պիտակին և ձշմարիտ ամրոցը «Փաթարալա» մէջ միակ և մասամբ սխալ նկարագրած տեղը—Մասնատանին է, այդու ամենայն պ. Զարգարեան հասկացել էր իր դերը: Քեկեանի դերը օրիորդ Քամաճեան այնքան բնական և զեղեցիկ կերպով կատարեց, որ աւելին ցանկալ անկարելի էր. դուք կը կարծէիք, որ գտնուվում էք Քեկեանում, հայ ընտանիքի մէջ: Ինչ վերաբերում է Օ. Եղիշխանեանին (Նատալիայ) նրա միակ պակասութիւնը այն էր, որ շատ էր կոտորատվում, ինչպէս ասում են, բայց օրիորդի քաղցր, ներդաշնակ երգը բոլորի վերահասակն էր սպասելու թափուրութիւնը: Պ. Մարկոսեանի (Սարգիս) երգը հիանալի և խիստ ազգու դուրս եկաւ: Ոչ պակաս զեղեցիկ խոսքացին և Թ. Ասատուրեան, օր. Մեղվինեան, պ. Լալայեան: Երեւում էր, որ ուսանողները և մեծ. օրիորդները բարեխաղաքար սովորել էին իրենց դերերը, ուստի և ներկայացումը ամբողջապէս շատ լաւ անցաւ և զեղեցիկ տպաւորութիւն գործեց: Ներկայացումից զոյացած զուտ արդիւնք մօտ 300 ր. կը բաժանուի շքուոր ուսանողներին: Պարահանդէսի ժամանակ, որ սկսեց ներկայացումից յետոյ մի առանձին խումբ ազգային երգեր էր երգում: Ներկայացման մեծապէս նպաստել էին և կողմնակի մարդիկ, ինչպէս իշխան Քէհրուսեան, յայտնի Նեմիրովի Գանչեկոն: Ժամը 4-ին մօտ 50 անձինք ընթրիքի նստեցին: «Тиф. Вѣстн.» լրագրի նախկին խմբագիրը շնորհակալութիւն յայտնելով հայ ուսանողութեան, հայ բեմի յարտաւերութեան և յառաջադիմութեան համար տօստ առաջարկեց: Նեմիրովի—Գանչեկոն զարտակելով է, որ մեր սրահում մի քանի հայ և վրացի ներկայացումներ եղան: Եւ խորին կերպով զընամտիական արուեստը: Ինձ հաճելի է տես

մարդիկ, յայտնեք մեր առաջին և ընդհանուր շնորհակալութիւնը մեր հուշակաւոր գիտնականին, ռուս բնագէտների ժողովի հիմնադիր պրոֆէսոր Ալեքսանդր Գարգանը և փառք նրան: Միանամու ծափահարութեամբ ժողովը շնորհակալութիւն յայտնեց:

Մասնաժողովի առեւտրային պրոֆէսոր Ինաստրանցի կարգաց մասնաժողովի գործունէութեան մանրամասն հաշիւը և կանոնադրութիւնը: Այդ հաշիւը երևաց, որ այժմեան ժողովը ամենաբազմամարդն էր և ամենահարուստը իր նիւթական միջոցներով: Մինչի ամսի 20-ը, անդամների թիւը հասել էր, 1,200 ի, դրանց թիւում 500 ուրիշ քաղաքներից և 38 կին:—Ինձ շատ ծանր թուաց, որ այդ 1,200 անունների մէջ մի հայ ուսուցիչ անուն չը լսեցի.—Ժողովի միջոցները կազմում են. ա) 3,000 բուրջի, որ տուել է ազգային լուսաւորութեան նախարարը, բ) 1,000 ր. համալսարանը, գ) 2,000—քաղաքային դոման, դ) 3,600 ր. անդամակցական վճար, գումար 9,600 բուրջի: Ահա կանոնադրութեան զխաւոր կէտերը:

- 1) Նպատակ—ռուս բոլիշների և բնագէտների ժողովի նպատակն է արագացնել բնական գիտութիւնների ուսումնական և դպրոցական գործունէութիւնը և նպատակ նրանց կատարելագործութեանը և այդ գործունէութիւնը զխաւորապէս ուղղել Ռուսաստանի օգտին և նրա նետազօտութեան, հայկայեան միջոց ռուս բնագէտներին միմեանց նետ ծանօթանալու:
- 2) Ժողովը գտնուվում է լուսաւորութեան միջնաստի նովանաւորութեան ներքոյ, ուստի և անմիջապէս կախումն ունի ուսումնարանական շրջանի նոգարարութիւնից:
- 3) Ժողովի անգամ կարող է լինել իւրաքանչիւր անձ, ով որ գիտնականապէս զբաղվում է բնագիտութեամբ, այսինքն իւրաքանչիւր ուսումնական, բայց ժողովի մէջ ձայն ունենալ կարող է միայն, ով որ կամ մի ինքնուրոյն գրուածք է տպել, կամ պրոֆէսոր և ուսուցիչ է բարձր և միջնակարգ դպրոցներում:
- 4) Ժողովի նիստերը լինում են ընդհանուր և մասնաւոր (բաժանմունքով). ընդհանուր նիստերը մէջ ընդհանուր նշանակութիւն ունեցող խնդիրներ են քննարկուվում, իսկ մասնաւոր նիստերում հարցուվում ու քննուվում են նոր նետազօտութիւններ և խնդիրներ, որոնք աւելի մասնագիտական նշանակութիւն ունեն:
- 5) Ժողովի բաժանմունքները կը լինեն. ա) անատոմիա և ֆիզիոլոգիա, բ) կենդանաբանութիւն և բազիլատական անատոմիա, գ) բուսաբանութիւն րոյսերի անատոմիա և ֆիզիոլոգիա, դ) հանրաբանութիւն, երկրաբանութիւն և պալէօնոլոգիա, ե) քիմիա և ֆիզիկա, զ) աստղաբանութիւն և մաթեմատիկայ, է) անտրօպոլոգիա, ը) բժշկականութիւն:

Ներկայ ժողովի կարեւոր յատկութիւնն այն է, որ շատ գիտնական և մասնաւոր ընկերութիւններ ու անձինք զիմել են նրան և առաջարկել մի քանի գործնական կարեւոր հարցեր լուծելու, այդ ի հարկէ ցոյց է տալիս, որ ռուս հասարակութիւնը հասկանում է ժողովի նշանակութիւնը և նրա գիտնական նշանակութիւնը: Մինչ այսօր 168 գիտնական յողուածներ են մտել ժողովի բերօն, լ թիւս որոց զիմեցի Նիւսնոլոգիան մասին, որ պիտի քննուի յետագայ ժողովներից մէկում:

Պ. առեւտրային հաշիւց յետ ժողովը ձեռնարկել նախագահի ընտրութեանը: Բէկէտով առաջարկեց քուէարկել, բայց ժողովը ի մի բերան ազգական ակէսայէր, Ալեքսէրս պատկառելի պիտանական բարձրացաւ ամպիրն և մի քանի ջերմ խօսքերով իր խորին շնորհակալութիւնը յայտնեց, բայց, սաց, ստիպուած եմ հրաժարուիլ այդ պատուի կրկու պատճառով. առաջին, որ հիւանդ եմ, երկրորդ որ ես չեմ մասնակցել ներկայ ժողովի աշխատանքին, ուստի և անարդարութիւն եմ համարուելիք աշխատանքի պատուը քաղել: Մի և նոյ ժամանակ Ալեքսէրս բացատրեց ժողովի գիտնական նշանակութիւնը և նրա օգուտները և իր կողմի առաջարկեց ընտրել նախագահ Բէկէտովին: Ժողովը խուռն ծափահարութեամբ ընդունեց այս առաջարկութիւնը, իսկ Ալեքսէրին այնու ամենայ նիւ ընտրեց պատճառով նախագահ:

Բէկէտով ի պատասխան իր ընտրութեան հետեւալ խօսքերն ասաց. «պարտնեմ, խորի շնորհակալութիւն, այն մեծ պատուի համար, որ ինձ արկել էս լաւ հասկանում եմ, որ ես արժանացայ այդ պատուին զխաւորապէս նրա համար որ դուք կամեցաք պատուել կարգադրիչ մասնաժողովը, որին ես նախագահ եմ և համալսարանի որին ես ներկայացուցիչ եմ: Գուցէ և իմ ալև մաղերս մասամբ պատճառ դարձան, որ ես այ բարձր ուշադրութեան արժանացայ ձեր կողմի ինչ և իցէ ընդունեցէք իմ շնորհակալութիւնը»

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐՈՒԲԻԿԻՑ

26 դեկտ. 79.

Առաջին նամակովս եւ ծանօթացրի ընթերցողներին VI ժողովի հետ, այժմ կսկսեմ նկարագրել նրա գործունէութիւնը և այն հարցերը, որ այդ ժողովը մշակում է և որը մեզ համար կարող է հասարակական նշանակութիւն ունենալ:

Գեկտ. 20-ին տեղի ունեցաւ ռուս բնագէտների առաջին ընդհանուր ժողովը ճիշդ ժամը 1-ին: Առաւօտեան նշանակված էր ֆիզիկական գիտարանը այցելել, որտեղ ցոյց էին տալիս միջնորդական երկոյթներին համար նոր ձեռք բերած գործիքներ: Ժամը 1-ին համալսարանի զխաւոր սրահը անագին բազմութեամբ լի էր: Ներկայ էին ոչ թէ միայն Պետերբուրգի անուանի ուսումնականները, այլ և մի քանի բարձր պաշտօնականատաներ, ինչպէս օրինակ Կեկեանով և այլն: Արահը ելքարական ճրագներով լուսաւորված էր: Նիստը բացեց իշխան Վ. Եղիշխանի. Պետերբուրգի ուսումնարանական շրջանի նոգարարն է, հետեւալ խօսքերով: «Ե՛մ. պարտնեմ. Ռուս բնագէտների VI ժողովը զուժարվում է համաձայն յունվարի 19-ին կայացած Բարձրագոյն թողութիւնն: Ներկայ ժողովի նպատակը բացատրված է կանոնադրութեան մէջ, ինչպէս կը տեսնէք: Անդամների ընդհանուր ժողովները իրենց առաջնորդ կուսենան նախագահին, որն այսօր պէտք է ընտրէք. իսկ ես այսօր ստացել եմ միայն ժողովի գիտնական նիստերի բացման պատուաւոր պարտաւորութիւնը: Պատիւ ունեմ յայտնելու VI ժողովի բացումը և ցանկանալու ձեզ, պարտնեմ, ամենայն յաջողութիւն ձեր զբաղմունքի մէջ:»

Ես մտաւայ ասել, որ սրահի վերի ծայրում մի տեսակ ամֆիթէատրոն, բեմ էր շինված, որտեղ կենտրոնում դրած էր մի մեծ, երկար սեղան կարգադրիչ մասնաժողովի անդամների և նախագահի համար. նրա աջ կողմին դարձեալ մի մեծ սեղանի շուրջ բոլորվել էին լրագրիներ թղթակիցները, որոնք թիւը հասնում էր 10-ի: Այդտեղ կարելի էր տեսնել «Голосъ» «Молва», «Новое Время», «Times» և Մշակի լրագրիների թղթակիցներին: Գուցէ առաջին անգամն էր, որ մի գիտնական ժողովում ներկայ էր մի հայ լրագրի ներկայացուցիչը: Պէտք չէ ասել, որ պ. պ. թղթակիցներին ամենայն յարմարութիւն տուած էր համակու իրենց նպատակին և երբ իւրաքանչիւր ժողովի պրոտոկոլը տպուվում է երկրորդ օրը եւ ստանում եմ ժողովի վարչութիւնից 2 օրինակ Մշակի խմբագրութեանն ուղարկելու առաջարկութեամբ, որն և ուղարկում եմ նամակիս հետ—Բայց դառնա՞ք ընդհանուր ժողովին:

Իշխան Վ. Եղիշխանու ձառից յետ, կարգադրիչ մասնաժողովի նախագահ, համալսարանի ղեկավոր Բէկէտով ողունցեց ժողովը հետեւալ խօսքերով:

«Այս անգամ ես բարձրանում եմ ամպիրն ողջունելու ձեզ իմ թանկագին ընկերակիցներին ոչ թէ միայն ամբողջ մասնաժողովի այլ և համալսարանի կողմից, որ ուրախութեամբ իր դռները բացում է ձեր առաջ. 12 տարի առաջ ես ջերմ կերպով մասնակից էի I կազմակերպութեան, բայց այն ժամանակ ես այս ամպիրնից դիմում էի ձեզ, իբրև համալսարանի ղեկավոր իսկ մասնաժողովի նախագահ էր պատկառելի պրոֆէսոր Ալեքսէրը, որին միայն մենք պարտաւոր ենք ռուս բնագէտների ժողով հիմնելու միտքը: Այս անգամ նա իր հիւանդութեան պատճառով չը կարողացաւ պաշտօնապէս մասնակցել մասնաժողովին, բայց նա մեզ օգնել է խօսքով և գործով: Եւ որովհետև մենք այսօր գումարվել ենք այստեղ միայն նրա գործունէութեան շնորհով, մենք պէտք է, իմ թանկագին ընկերներ, իբրև արդարադատ

մարդիկ, յայտնեք մեր առաջին և ընդհանուր շնորհակալութիւնը մեր հուշակաւոր գիտնականին, ռուս բնագէտների ժողովի հիմնադիր պրոֆէսոր Ալեքսանդր Գարգանը և փառք նրան: Միանամու ծափահարութեամբ ժողովը շնորհակալութիւն յայտնեց:

Մասնաժողովի առեւտրային պրոֆէսոր Ինաստրանցի կարգաց մասնաժողովի գործունէութեան մանրամասն հաշիւը և կանոնադրութիւնը: Այդ հաշիւը երևաց, որ այժմեան ժողովը ամենաբազմամարդն էր և ամենահարուստը իր նիւթական միջոցներով: Մինչի ամսի 20-ը, անդամների թիւը հասել էր, 1,200 ի, դրանց թիւում 500 ուրիշ քաղաքներից և 38 կին:—Ինձ շատ ծանր թուաց, որ այդ 1,200 անունների մէջ մի հայ ուսուցիչ անուն չը լսեցի.—Ժողովի միջոցները կազմում են. ա) 3,000 բուրջի, որ տուել է ազգային լուսաւորութեան նախարարը, բ) 1,000 ր. համալսարանը, գ) 2,000—քաղաքային դոման, դ) 3,600 ր. անդամակցական վճար, գումար 9,600 բուրջի: Ահա կանոնադրութեան զխաւոր կէտերը:

- 1) Նպատակ—ռուս բոլիշների և բնագէտների ժողովի նպատակն է արագացնել բնական գիտութիւնների ուսումնական և դպրոցական գործունէութիւնը և նպատակ նրանց կատարելագործութեանը և այդ գործունէութիւնը զխաւորապէս ուղղել Ռուսաստանի օգտին և նրա նետազօտութեան, հայկայեան միջոց ռուս բնագէտներին միմեանց նետ ծանօթանալու:
- 2) Ժողովը գտնուվում է լուսաւորութեան միջնաստի նովանաւորութեան ներքոյ, ուստի և անմիջապէս կախումն ունի ուսումնարանական շրջանի նոգարարութիւնից:
- 3) Ժողովի անգամ կարող է լինել իւրաքանչիւր անձ, ով որ գիտնականապէս զբաղվում է բնագիտութեամբ, այսինքն իւրաքանչիւր ուսումնական, բայց ժողովի մէջ ձայն ունենալ կարող է միայն, ով որ կամ մի ինքնուրոյն գրուածք է տպել, կամ պրոֆէսոր և ուսուցիչ է բարձր և միջնակարգ դպրոցներում:
- 4) Ժողովի նիստերը լինում են ընդհանուր և մասնաւոր (բաժանմունքով). ընդհանուր նիստերը մէջ ընդհանուր նշանակութիւն ունեցող խնդիրներ են քննարկուվում, իսկ մասնաւոր նիստերում հարցուվում ու քննուվում են նոր նետազօտութիւններ և խնդիրներ, որոնք աւելի մասնագիտական նշանակութիւն ունեն:
- 5) Ժողովի բաժանմունքները կը լինեն. ա) անատոմիա և ֆիզիոլոգիա, բ) կենդանաբանութիւն և բազիլատական անատոմիա, գ) բուսաբանութիւն րոյսերի անատոմիա և ֆիզիոլոգիա, դ) հանրաբանութիւն, երկրաբանութիւն և պալէօնոլոգիա, ե) քիմիա և ֆիզիկա, զ) աստղաբանութիւն և մաթեմատիկայ, է) անտրօպոլոգիա, ը) բժշկականութիւն:

Ներկայ ժողովի կարեւոր յատկութիւնն այն է, որ շատ գիտնական և մասնաւոր ընկերութիւններ ու անձինք զիմել են նրան և առաջարկել մի քանի գործնական կարեւոր հարցեր լուծելու, այդ ի հարկէ ցոյց է տալիս, որ ռուս հասարակութիւնը հասկանում է ժողովի նշանակութիւնը և նրա գիտնական նշանակութիւնը: Մինչ այսօր 168 գիտնական յողուածներ են մտել ժողովի բերօն, լ թիւս որոց զիմեցի Նիւսնոլոգիան մասին, որ պիտի քննուի յետագայ ժողովներից մէկում:

Պ. առեւտրային հաշիւց յետ ժողովը ձեռնարկել նախագահի ընտրութեանը: Բէկէտով առաջարկեց քուէարկել, բայց ժողովը ի մի բերան ազգական ակէսայէր, Ալեքսէրս պատկառելի պիտանական բարձրացաւ ամպիրն և մի քանի ջերմ խօսքերով իր խորին շնորհակալութիւնը յայտնեց, բայց, սաց, ստիպուած եմ հրաժարուիլ այդ պատուի կրկու պատճառով. առաջին, որ հիւանդ եմ, երկրորդ որ ես չեմ մասնակցել ներկայ ժողովի աշխատանքին, ուստի և անարդարութիւն եմ համարուելիք աշխատանքի պատուը քաղել: Մի և նոյ ժամանակ Ալեքսէրս բացատրեց ժողովի գիտնական նշանակութիւնը և նրա օգուտները և իր կողմի առաջարկեց ընտրել նախագահ Բէկէտովին: Ժողովը խուռն ծափահարութեամբ ընդունեց այս առաջարկութիւնը, իսկ Ալեքսէրին այնու ամենայ նիւ ընտրեց պատճառով նախագահ:

Բէկէտով ի պատասխան իր ընտրութեան հետեւալ խօսքերն ասաց. «պարտնեմ, խորի շնորհակալութիւն, այն մեծ պատուի համար, որ ինձ արկել էս լաւ հասկանում եմ, որ ես արժանացայ այդ պատուին զխաւորապէս նրա համար որ դուք կամեցաք պատուել կարգադրիչ մասնաժողովը, որին ես նախագահ եմ և համալսարանի որին ես ներկայացուցիչ եմ: Գուցէ և իմ ալև մաղերս մասամբ պատճառ դարձան, որ ես այ բարձր ուշադրութեան արժանացայ ձեր կողմի ինչ և իցէ ընդունեցէք իմ շնորհակալութիւնը»

Թէ մասնաժողովի, թէ համալսարանի և թէ իմ կողմից»

Այս բոլորից յետ ժողովը դիմեց իր գրադմուսներին: Կարգադրուեցան հետևյալ յօդուածները 1) պրոֆէսոր Վազէրի իմաստալից ճառը պիտու թեան նշանակութիւնը, որի բովանդակութեան հետ ես կը ծանօթացնեմ ընթերցողներին 2), նախագահ Բէկէտովի 2 առաջարկութիւնները ա) Բօլորիստի հետազոտելու համար մի էկզպէդիցիան կազմել Բ) բոսանիական հաւաքածուներ կազմել 3) պրոֆէսոր Կէսայէրի երկու առաջարկութիւնները ա) Լրիմի բնագիտական հետազոտութեան համար մասնաժողով նշանակել Բ) մի մշտական մասնաժողով նշանակել Ռուսաստանի ձրկներին կենսաբան և ձկնաբանութիւնը քննելու: Այս բոլոր առաջարկութիւնները ժողովը համալրութեամբ ընդունեց և յանձնեց համապատասխան բաժանմունքներին աւելի մշակելու համար:

Ժամը 3-ին նիստը փակվեցաւ: Ժամը 5-ին Երեւանի հիւրանոցում նշանակված էր ճաշ, որին ներկայ էին մօտ 500 հոգի: Այդտեղ խմբեցին կայսեր, համալսարանի, բնագիտական ու բնական գիտնականների կենսաբան:

Հ. Առաքելեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿՈՒՅԻՑ

Կ. Պոլիս, 22 դեկտ. 79

Երեք ընկերութեանց միացման մասին հասարակ բարեմիտ անձանց ձգուածը չեն պատկեր: Երբերս հրատարակվեցաւ տեղիս ամենաշատ տարածված թերթին մէջ, «Թէրեմանը Էֆրեմ» (Երազում մի հայրէն յօդուած այդ ընկերութեանց միացման մասին: Յօդուածը, պիտի խոստովանեմ, խիստ է գրված և սարսափելի յարձակումներ ըրին յիշեալ յօդուածին դէմ: Դո՞ղբ միտքն օյն յօդուածով բաւական զրգոված՝ օրէ օր միտքեան գործը աւելի բարձր ձայնով կը պահանջէ:

Հօտը իր վաղէմի քաղաքականութիւնն վերստին ձեռք առնուլ սկսած է: Նորա ցանկութիւնն էր Արևելքի բոլոր կաթոլիկներն, առանց խորութեան ազգի, միացնել մի մականի ներքև և այդ մականն այժմ տալիս է Հասունի, իր ամենակողմ ծառայի: Հեռագիրը հաղորդեցին թէ Հասուն պապի կողմէն պիտի երթայ շնորհաւորելու Սուլթանին իսլամ նոր տարուց առթիւ, թէ հրաման ըստացրէ է Հասուն կարգադրելու կղերական իրաւասութիւն (droit ecclésiastique) Արևելքի մէջ Բ. Գրան հետ, հաղորդեցին նաև, թէ Հասունը մօտ օրից գնալու է Հասուն կարգի նալի աստիճան ընդունելու: Այս ամենն աներկբայ նշան է թէ Հասուն կամի Հասունի ձեռքին և նրա իշխանութեան տակ համախմբել արեւելեան բոլոր կաթոլիկներին և ինքն Հասուն այլ ևս ինքն իրեն պատրիարք հայոց չանուանէր, այլ կաթոլիկաց պատրիարք, այսինքն՝ յոյն, արաբ, հայ, ղղտի, ասորի կաթոլիկաց պատրիարք: Այդպիսով հայոց ազգութեան կաթոլիկ մասը կը կըլանվի կաթոլիկ ընդհանուր կղերական անդունդին մէջ: Այդպէս կը գոյանայ պաթոլիկ պետութիւն մը իսլամ պետութեան մը մէջ (un état catholique dans un état musulman): Զարմանալիս այն է որ այս անձոնի քաղաքականութեան մեծապէս կը նպաստէ ազատամիտ, հանրապետական զրանսին, որ կը յուսայ, այդ միջոցով, իր ազգեցութիւն ապահովել Արևելքում, ուր գիտէ թէ Անգլիա կաշխատէ ուրիշ միջոցներով հային, արաբին, յոյնին սիրտը շահել: Այս հարցը շատ շահեկան է սերտել և ես կը ցանկայի մի աւելի երկար աշխատութիւն նուիրել նրան: Ես համախմբել չեմ ձեռք թէ հայ կաթոլիկներ պիտի չը վերադառնան ի լուսաւորչական եկեղեցին: Ես կը նկատեմ կըրօնը իր քաղաքագէտ, որ կը պարտի հանրա առնուլ թիւրքաց և պարսից հայ ազգի ըստուակ վիճակը, թէ երկրային զիջքը և թէ բարոյական կրթութիւնը: Կրօնն ալ մի գործիք է յառաջադիմութեան, մի գործիք անկախութեան հասցնելու, մի գործիք ազգայնութիւնը պահպանելու, անուշտ մինչև մէկ աստիճան: Գեռ այդ աստիճանին աստի կողմն ենք և ոչ թէ անդիլ: Անոր համար ևս ամենին չեմ ցանկար որ կաթոլիկութիւն լինի ազգին մէջ, չեմ ցանկար որ բողոքականութիւն լինի: Ազգային տեսակետէն, ազգի ամբողջութիւնն պահպանելու դիտաւորութեամբ ազգին ապագայ քաղաքական վիճակը ապահովելու մտքով, որքան և անմիջապէս լինէր՝ անկրօնութիւն անգամ նախամեծար կը համարեմ, քան ազգային եկեղեցիէն անջատու, քան պաշտօնական կաթոլիկութիւն ու պաշտօնական բողոքականութիւն: Այս դաւանութեանց մէջ, որքան ալ նոցանէ մին կամ միւսը առանձին վեր առած պատւական կարող են լինել, պաշտօնական անհատ է, որ ինձ հանձնի չէ, վասն զի պաշտօնականը կարող է ազգին ընդհանրական շահերը վտանգել, թշնամի բանակներ յերան հանել, ինչպիսի են այսօր կաթոլիկները, լուսաւորչականներն ու բողոքականներն, որք մէկ մէկու տուն կը քանդեն, քանդելով և ընդհանուր ազգին տունը:

Կը տեսնեմ թէ նոր տարին ալ մօտ է, թէ և այս գիր ձեռք պիտի հասնի երբ դուք արդէն թեւակոխած կը լինիք Սմանուր: Ռուսի իմ ամեն անկեղծ բարեմաղթութիւնք կընեմ վասն Վազէրի բարգաւաճման:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՈՒՍԱՆԻՑ

Սպահան, 14 դեկտ. 79.

Յունիս ամի 5-ին կատարվեցաւ մի հանդիսաւոր ընդունելութիւն մեր քաղաքում: Թէ հրանի

ուսաց դեսպանատան պաշտօնատար խման Յեղորովի Պախտանովը կայսեր կողմից մի շքանշան պէտք է բերէր: Սպահան տեղալին կուսակալ արքայազն Չըլը սուլթանի համար: Արդէն առաջուց Թէ հրանի ուսաց դեսպանը այնտեղի վիճակաւոր քահանայ տէր Գասպար Տէր Սիմոնեանի միջնորդութեամբ խմացում տուած էր Սպահանի ս. Ամենափրկիչ վանքի առաջնորդական փոխանորդ խաչատուր վարդապետին, որ իրանց պաշտօնատարը Սպահան հասնելու ժամանակ ընդունիլի որպէս հիւր ս. Ամենափրկիչ վանքում:

Վանքում պատշաճաբար պատրաստութիւնները տեսնելուց յետոյ, երբ մտտեցաւ գալուստան օրը, արժանապատու վանահայրը ուղարկեց ուսաց պաշտօնատարի ընդառաջ մի քահանայ և քահանայի պատուաւոր անձինք, որոնք հանդիպեցան նրան քաղաքից երեք փարսախի հեռաւորութեամբ Գեազ կոչված տեղում. և ընդունեցին նրան: Նոյնպէս և վեմափառ Արքայորդին ուղարկել էր իր կողմից ընդառաջ մի քահանայ պարսիկ իշխաններ, բաղմաթիւ արուձի և այլ մեծամեծ պատրաստութիւններ և մի փառաւոր կառք, որի մէջ նստած նա պէտք է մուտք գործէր քաղաքը:

Երբ ուսաց պաշտօնատարը մտաւ քաղաքը, ինքը արժանապատու վանահայրը եկեղեցական դասի հետ, զիմաւորեց նրան Չարբազ կոչված արքայական ճեմելիներում, և յարգանքով ընդունելով, բաղմաթիւ հայ և պարսիկ աստիճանաւորների հետ, զիմեցին դէպի վանքը: Նոյն ժամին վանքի գանգալները սկսեցին հնչել, և երբ մտտեցան զրանը, տեղալին սուլթանութեան համեմատ, մի ոչխար զոհեցին պաշտօնատարի ոտքերի առջև: Նա ուղղակի գնաց վանքի եկեղեցին, և աղօթելուց յետոյ, հրաւիրվեցաւ առաջնորդարանի մեծ դահլիճը, որը փառաւոր կերպով զարդարված էր: Նոյն ժամում արքայազն իշխանի կողմից եկան պարսիկ աստիճանաւորներ, բերելով իրանց հետ զանազան տեսակ քաղցրաւենիք, դրած արձաթիայ թանգազին մատուցարանների վրա, և շնորհաւորեցին ուսաց պաշտօնատարի գալուստը:

Հետեւեալ օրը ուսաց պաշտօնատարը և արժ. հայր սուրբը, առնելով իրանց հետ կայսրի ուղարկած շքանշանը, որ զարդարած էր բրիլիանտներով, կապտադոյն ժապաւնի վրա, պատրաստվեցան տանել Արքայորդուն: Իշխանի կողմից կանխապէս ուղարկված էին մի փառաւոր կառք և զեղեցիկ նժոյգներ, որոնց վրա նստելով սկսեցին դիմել Սպահանի հին թագաւորների հողակապ պալատը, որ կոչվում է Սարիուշիէ: Կառքի առջևից գնում էին երկու կարգ զինուորներ, իսկ հետից բաղմաթիւ զօրք: Պալատում բարձրաստիճան պարսիկ իշխաններ մեծ յարգանքով ընդունեցին ուսաց պաշտօնատարին և հայոց հայր սուրբին, և ներկայացրին Արքայորդուն, որ այն օր ի պատիւ կայսրի շքանշանին, հողեմված էր ամենաշքեղ կերպով և շողորով ու վառում էր իր ոսկեհուռ, գոհարազարդ զգեստների մէջ: Մատուցանելով շքանշանը Արքայորդուն, ուսաց պաշտօնատարը իր համառօտ ճառի մէջ յայտնեց այն միտքը, թէ զա կայսրի բարեկամական զգացմունքի արտայայտութեան մի նշան է, որ ընծայում է Շահի վեմափառորդուն, և թէ երկու պետութիւնների՝ ուսաց և պարսից բարեկամական յարաբերութիւնները են և կը մնան միշտ հաստատուն, և վերջացրեց իր խօսքը բարեմաղթութիւններով Արքայորդու կենաց համար: Այնուհետև մատուցին թէյ, զանազան տեսակ օշարակներ և քաղցրաւենիք, և բոլոր հանդիսականները գլուխ խոնարհեցնելով, շնորհաւորեցին Արքայորդուն:

Քանի օրից յետոյ Արքայորդին ընծայեց ուսաց պաշտօնատարին մի զեղեցիկ արաբական նժոյգ, և հրաւիրելով նրան ու արժ. հայր սուրբին իր պալատը, հիւրասիրութիւնից յետոյ, ինքը անձամբ տարաւ նրանց իր հարուստ թանգարանը, և ցոյց տուեց բոլոր հազարիւստ հուրթիւնները, որոնք պարսից հին թագաւորների ժամանակներից սկսված, մեծ խնամքով պահված էին այնտեղ: Գետոյ ընծայեց պաշտօնատարին իր լուսանկար պատկերը, որ դրած էր ոսկի շքանշանի մէջ զարդարած արձաթիւնով և զանազան թանգազին ակներով: Իսկ իր վերջին հրաժարական այցելութիւնը տալու ժամանակ ուսաց պաշտօնատարը ստացաւ նորին վեմափառութիւնից մի թանգազին բրիլիանտ մատանի, և նրա երկու ծառաները, որոնցից մէկը հայ էր, Գարսիսիւն անունով, իւրաքանչիւրը ստացան 200 թուման պարսից ոսկի: Աւելացնում ենք և այն, որ քաղաքի մեծ խմամբում պարսից դեսպետը նոյնպէս իր կողմից պատուասիրեց ուսաց պաշտօնատարին, և ուղարկելով մի քանի մատուցարանով քաղցրաւենիք, շնորհաւորեց նրա գալուստը, որի տեղ ընդունեց պաշտօնատարի փոխադարձ այցելութիւնը: Ռուսաց պաշտօնատարի ամբողջ ներկայութեան

ընթացքում, վանքի կառավարութիւնը միշտ պատրաստ ունէր բոլոր պիտոյքները, որ կը պատշաճէին նրա արժանաւոր հիւրերի ընդունելութեան համար: Ինչու էին ամեն օր փառաւոր ճաշեր և ընթերցանք, բոլոր վանքի հաշուի փոխադարձապէս հիւրասիրելեան նաև քաղաքի բրիտանաց հասարակութեան նշանաւոր անձինքներից, որոնց մէջ ուշադրութեան արժանի են՝ պ. Ստեփաննոս Աղանտրեան հայազգի բրիտանական գործակատարը, պ. խօջա իւսուֆ վաճառականապետը, միսար Գիոնիս անգլիացին, արքայորդու բժշկապետը, որը մի և նոյն ժամանակ Չուղայի զբոսայրոցների տեսուչ է, և պ. Կիրտի Յովհաննիսեան Չուղայի ստիկանութեան զլխաւորը (գարուղայ):

Յունիսի 10-ին կիրակի օրը, վանքի տաճարի մէջ պատարագ մատուցվեցաւ և կատարվեցաւ մաղթանք կայսրի ազատութեան համար: Պատարագին ներկայ էր ուսաց պաշտօնատարը և քաղաքի հայ հասարակութիւնը:

Տասն և հինգ օր մնալով վանքում, ուսաց պաշտօնատարը, որպէս հանդէսով ընդունված էր նոյնպէս պատուով ճանապարհ զբոսեցաւ դէպի Թէհրան: Արժ. հայր սուրբը և նա, նստելով Արքայորդուց յատկապէս ուղարկված կառքի մէջ, զինուորների և հեծելազորների առաջնորդութեամբ զօրաւ եկան քաղաքից, և իջնանեցին մի գիղում, ուր Արքայորդին փառաւոր ընթերց էր պատրաստել տուել, և այնտեղից բաժանվեցան:

Վերջացնելով նամակ, հարկաւոր եմ համարում յիշել և այն, որ Թէհրանի ուսաց վանքի զեսպանը իր երկու նամակների մէջ, որոց մէկը ուղարկած էր Արքայորդուն, իսկ միւսը Չուղայի ս. Ամենափրկիչ վանքի առաջնորդական փոխանորդին, յայտնել էր թէ իր և թէ իր տէրութեան համակրութիւնը դէպի Սպահանի հայ հասարակութիւնը: Մի և նոյն միտքը յայտնել էր նա և Արքայորդու նամակի մէջ, ինչդեպով, որ նա առանձին ուշադրութիւն դարձնէ հայերի վրա, որոնք ապրում են Սպահանում և չըջակայ գիւղերում: Արքայորդին, որպէս ամբողջ Սպահանի նահանգի կուսակալը, պատասխանեց վեմ. դեսպանին, թէ ամեն ջանք գործ կը դնէ, որ հայերի վիճակը հանգիստ և ապահով լինի, և իր շնորհը ու հովանաւորութիւնը անպակաս պիտի անէ այդ ազգից: Իսկ արժ. խաչատուր հայր սուրբը իր գրութեան մէջ, որ առաքեց դեսպանին ուսաց պաշտօնատարի ձեռքով, ծրարեց 15 յօդուածներով այն բոլոր բարենորոգումները, որ անհրաժեշտ էին Սպահանի հայոց վիճակը բարելոցելու համար, և խնդրեց դեսպանի միջնորդութիւնը նրանց գործադրութեան մասին: Յուսով ենք, որ դեսպանի շնորհի կատարումն կը ստանան:

Ռուսաց պաշտօնատարը միկնեցաւ վանքից, ընծայելով 30 թուման հայոց աղքատաց արկղին և 10 թուման կուսանաց անապատին: Ատենադպրի ս. Ամենափրկիչ վանքի Աւետիք Կ. Մ. Չոհրպահանց:

ՎԵՐԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՆԻՑ

ԿԱՆՆ, 11/23 յունվարի: Կայսրուհին վատ չը քնեց, քունը ընդհատվում էր հազով, քրքրտիւրը չափաւոր էր. օրուպ ընթացքում բաւականացուցի կերպով ձաշեց. ջերմութեան աստիճանը երկայնիս 38 էր, իսկ երակի զարկը 108. առաւօտը ջերմութեան աստիճանը 37,8 էր, իսկ երակի զարկը 116:

ԼՍՆԴՕՆ, 11/23 յունվարի: Թէհրանից հաղորդում են, որ Ռուսաստանը աշխատական խանի հետ պայման է կապել, որպէս զի թոյլ տրվի նաւերին ուսաց գործերով անցնել Ամուրարիայի վրայով:

Կ. ՊՈԼԻՍ, 13/24 յունվարի: Հաստատուում են, որ թիւրքաց և պարսից կառավարութիւնները բանագնացութիւններ են սկսել ստորագրելու մի դաշնագրութիւն, որի պորտութեամբ պէտք է սպաշտուայնել Պարսից ծոցը ծովային մի մեծ պետութեան խորամանկ դիտաւորութիւններից: Այս գործը անմիջապէս քննվում է սուլթանի և պարսից դեսպանի մէջ, որը մի շարքովայ մէջ երեք անգամ գնաց սուլթանի պալատը:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ